

ՍԱՂՄՈՍ 125

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստված շրջապատում է Իր ժողովրդին	ՏԵՐԸ Իր ժողովրդի զորությունը	Ազգային թշնամիներից ազատագրման համար աղոթք (Ողբ)	Աստծո ժողովրդի ապահովությունը	Աստված պաշտպանում է Իր հավատարիմներին
<u>MT ներածություն</u> Դավթի աստիճանների երգը				
125:1-3	125:1-2	125:1-5	125:1-2	125:1-2
	125:3		125:3-5բ	125:3
125:4-5	125:4			125:4
	125:5ա-գ			125:5ա-բ
			125:5գ	125:5գ
	125:5դ			

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 125:1-3</p> <p>¹ՏԻՐՈՉԸ վստահողները Սիոն լեռան նման են, Որ չի սասանվում, այլ հավիտենական է:</p> <p>²Ինչպես լեռներն են շրջապատում Երուսաղեմը, Այնպես էլ ՏԵՐՆ Է Իր ժողովրդի շուրջբոլորը՝ Այսուհետև մինչև հավիտյան:</p> <p>³Քանի որ ամբարշտի գավազանը չի մնալու արդարների բաժնի վրա, Որպեսզի արդարներն իրենց ձեռքերն անօրենությամբ չմեկնեն:</p>

125:1ա «ՏԻՐՈՉԸ վստահողները» Սա սուրբգրային հավատքի կարևորագույն պայմանն է: Այս հասկացությունը Սաղմոսներում պարբերաբար կրկնվում է (BDB 105, KB 120, տես՝ Սաղմ. 9:10, 21:7, 22:4-5, 25:2, 26:1, 28:7, 32:10, 37:3, 40:4, 55:23, 56:4,11, 62:8, 84:12, 91:2, 112:7, 115:9,10,11, 125:1, 143:8): Հաճախ այս նույն հասկացությունը արտահայտվում է որպես՝

1. վստահություն անվանը՝ Սաղմ. 33:21
2. վստահություն ողորմությանը՝ Սաղմ. 13:5, 52:8
3. վստահություն խոսքին՝ Սաղմ. 119:42
4. վստահություն փրկությանը՝ Սաղմ. 78:22

Վստահության համար աստվածաբանորեն առնչվող բառը (BDB 52) բացատրվում է ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ: Հունարեն հակապատկերը բացատրվում է ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ ՆԿ-ՈՒՄ:

Ես սկսել եմ հավատալ, որ գոյություն ունեն մի քանի հիմնական տարրեր ճշմարիտ և հասուն աստվածաշնչյան հավատքի՝ վստահության համար:

1. ապաշխարություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ (ՀԿ))
2. հավատք/վստահություն/հավատալ
3. հնազանդություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ)
4. հարատևություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ):

125:1բ Իսրայել ազգին տրված այս խոստումների ամբողջական աստվածաբանական գրառմանը և երկու Հատուկ Թեմաներին ծանոթանալու համար, տես Սաղմոս 122:6-9-ի իմ գրառումները:

LXX այս տողը ներկայացնում է որպես ՅԱՀՎԵԻՆ նկատի ունեցող (այսինքն՝ «նա, ով բնակվում է Երուսաղեմում, երբեք չի սասանի»): Ըստ երևույթին սա բխում է Սաղմ. 9:11-ում ՅԱՀՎԵԻ անունից:

❖ «Սիոն լեռը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՈՆ

❖ «հավիտյան» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('olam)

125:2 «Լեռների» նկարագրությունը կիրառվում է մի քանի իմաստով (տես՝ Սաղմ. 121:1-ի գրառումը): Այստեղ այն նկատի ունի պաշտպանությունը, որը լեռներն ապահովում են զավթիչներից պաշտպանելու համար: ՅԱՀՎԵՆ Իր ժողովրդի վահանն ու պաշտպանն է:

❖ «հավիտյան» Այս տերմինը (BDB 761) կիրառվում է Սաղմ. 125:1 և 2-ում: Այն մի քանի նշանակություն ունի՝ կապված ուխտի հավատարմությանը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('olam)

125:3 «զավազան» Սա (BDB 986) թագավորության նկարագրություն է (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ որպես Թագավոր, տես՝ Սաղմ. 45:6): Այն առաջին անգամ կիրառվել է Ծննդ. 49:10-ում՝ ապագա Հուդայի ցեղից Դավթի սերնդից (տես՝ 2 Թագավորաց 7, 1 Մնացորդաց 17) թագավորի համար: Այստեղ այն խոստման մասին է, որ ոչ մի (1) օտար թագավոր կամ (2) կռապաշտ հուդայական թագավոր չի թագավորելու Աստծո ժողովրդի վրա: Ակնհայտ է, որ այս խոստումը պայմանական է (այսինքն՝ Սաղմ. 125:3բ,4):

Սաղմոս 125:3-ի ժամանակացույցն անհայտ է:

1. թշնամին այժմ վերահսկում է Իսրայելը (ներկա)
2. թշնամին վերահսկել է Իսրայելը (անցյալ)
3. թշնամին երբեք չի վերահսկելու Իսրայելը (ապառնի)

❖ «ամբարշտի» Սա կարող է վերաբերել՝

1. հեթանոս օտար իշխանավորի
2. կռապաշտ իսրայելացի իշխանավորի

Այն մատնանշում է մեկին, որը շեղվել է ՅԱՀՎԵԻ ուխտի պահանջներից:

❖

NASB
NRSV, JPSOA, REB
TEV
NJB
LXX

«չի մնալու երկրի վրա»
«հատկացված հողի վրա»
«մշտապես չի իշխելու երկրի վրա»
«չի մնալու ժառանգության վրա»
«հատկացվածի վրա»

ԲԱՅԸ (BDB 628, KB 679, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) հիմնականում նշանակում է «առանց հանգիստ»: Այստեղ ունի «մնալու» կամ «տեղավորվելու» նշանակությունը:

Եբրայերեն (բառացի՝ «արդարին հատկացված երկիրը») ունի ՆԱԽԴԻՐ և ԳՈՅԱԿԱՆ (BDB 174), որը մատնանշում է ժառանգություն: Նկարագրությունը բխում է Հեսուի (այսինքն՝ Հեսու 12-19) Բանանի երկիրը եբրայական ցեղերի միջև աստվածային առաջնորդությամբ՝ վիճակ զցելով բաժանելու պատմությունից (տես՝ Սաղմ. 16:5):

❖ «արդարը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

❖ «ձեռքեր» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 125:4-5

⁴Ո՛վ ՏԵՐ, բարիք արա բարիներին ու սրտով ուղիղներին:

⁵Բայց նրանց, որ իրենց ծուռ ճամփաներին են դառնում,
ՏԵՐԸ տանելու է անօրենություն գործողների հետ,
Իսկ Իսրայելի վրա խաղաղություն է լինելու:

125:4 «Բարի՛ք արա» Սա *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (BDB 405, KB 408): Աստված «բարի» է (BDB 373 II, տես՝ Սաղմ. 86:5, 100:5, 106:1) և Նրա ժողովուրդը պետք է ներկայացնի Իրեն (տես՝ 2 Օրինաց 8:16):

Եբրայերենի երկու «բարի» բառերն էլ կիրառվում են այս համարում:

Այս հասկացությունը համազոր է «հնձում ենք այն, ինչ ցանում ենք» տողին: Տես՝ առցանց Փաղատացիների 6:7-ի գրառումը:

❖ «սրտեր» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏ

125:5 Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է Սաղմ. 125:4-5 բնութագրում երկու տեսակ մարդկանց («նրանք, ովքեր...»): Սա հայտնի որպես «երկու ճանապարհը» (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 28, 30:15, 19, Սաղմոս 1:1): Մարդու փոխհարաբերությունն Աստծո հետ կարելի է տեսնել նրա ապրելակերպով (տես՝ Մատթ. 7:15-23): Հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկանիշներ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

❖ «**ծուռ ճամփաներ**» Ծուռ ճանապարհը (BDB 785) արդար ճանապարհի ճիշտ հակառակն է (տես՝ Սաղմ. 5:8, 139:24, 143:10):

Ուշադրություն դարձրե՛ք մարդկանց բնութագրող գուգահեռ կերպերը՝

1. «նրանք, որ բարի են»
2. «սրտով ուղիղները»
3. «նրանք, որ իրենց ծուռ ճամփաներին են դառնում»
4. «անօրենություն գործողները»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ

❖ «**խաղաղություն լինի Իսրայելի վրա**» Սա բառացի նշանակում է «խաղաղություն Իսրայելին»՝ առանց ԲԱՅԻ, սակայն այն կարծես թե աղոթք լինի: Խաղաղություն կարող է լինել միայն հավատացյալ, արդար Իսրայելի վրա: ՆԿ-ում սա վերաբերում է Հիսուս Զրիստոսի հետևորդներին (տես՝ Գաղ. 6:16): Նոր Ուխտի մեջ այլևս չկան հրեաներ կամ հույներ (տես՝ Հռոմ. 2:28-29, 9:6, Գաղ. 3:7,29, Փիլ. 3:3): ՀԿ-ը պետք է մեկնաբանել Հիսուսի և ՆԿ-ի ամբողջական՝ լրիվ հայտնության միջոցով:

Խաղաղության Աստվածը և Խաղաղության Իշխանը ցանկանում են խաղաղություն բոլոր նրանց, ովքեր վստահում են Նրանց:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ (*shalom*):